

ՀԻՆ ՔՆՍՐ

Ի Համբարձումն Տեառն .

Ա Հօր միածին
Յերկինս սրլացեալ աղամային մարմնով :
Նըւադ ներբողից եղանակեն նըմա
Հոյք հոգեղինացն մարգարէից խըմբիւր :
Դըշխոյն պանծալի մաքրապաճոյճ գեղով
Պըճնեալ մըտանէ ի հարսնարան լուսոյ :
Բաբունը հոգեւորը ձեռնադրեցան այսօր
Օծմամբ սըրբութեան ի յօծելոյն մեծէ :
Ի սուգ տըրտմութեան թաղծեալ մետասանիցն
Դէտ ակն ունէին իջման Հոգւոյն սրբոյ .
Ահիւ սարսափմամբ տաղնապէին վերինքն
Ելիւքն Յիսուսի արիւնազարդ մարմնով :
Սոսկալի ձայնիւ եղանակեն այսօր
Ձոկը սերովբէից սաւառնացեալ թեւօք .
Ի ձայն ցընծութեան երգեմք եւ մէք այսօր
Փըրկողին ըզմեզ փառք յաւիտեանս . ամէն :

Վեհից թագաւորն այսօր առ Հայր մըտանէ ,
Արեամբ կարմրութեամբ ներկեալ մարմինըն մաքուր .
Բաբունեացըն պետն Յիսուս օծեալ միածինն ,
Դղըրդեալ զարմացոյց զվերինս օտար տեսութեամբ :
Ահիւ սարսափմամբ լըցեալ ջոկը հոգեղինացն ,
Պարուք ցընծութեամբ երգէին զերգըս սըրբասացս :
Եւ մէք երգակցեալ նոցին՝ հընչմամբ օրհնութեամբ
Տայուք գովութիւն յաւէտ սուրբ Երրորդութեանն .
Ի փառս աւարտեալ ըզբանս փառաց Միածնին :

ԱՆԴՐԷԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Անդրէաս անուամբ երկու վարդապետք ծանօթ են մեզ 'ի մեր պատմութեան .
մէկն աշակերտ կամ աշակերտակից Ս . Թարգմանչաց մերոց . մէկալն ատենա-
դալի անուանեալ Հեթմոյ թագաւորի յ'ԺԳ դարու . թերեւ այս ետքինիս է Տաղս .
որոյ նման և աւելի երկայն մէկ կամ երկու տաղ ալ ունի 'ի Ս . Հոգին , որուն
տնագլուխ տառքն կապեն՝ Անդրիասի երգ մեղապարտի նոշաստի երգս . իսկ
այս համբարձման տաղիս՝ Անդրիասի Վարդապետի :